

Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ 717—718 թթ. ՊԱՇԱՐՈՒՄԸ ԱՐԱՐՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԻ

Արաբական խալիֆայության գոյության առաջին տարիներից սկսած, նրա արտաքին քաղաքականության կենտրոնում եղել է Բյուզանդական կայսրության բոլոր նահանգների նվաճումը և նույնիսկ վերացումը:

Դեպի Բյուզանդիայի տիրույթները կատարած բազմաթիվ արշավանքներից երեքի ընթացքում արաբներին հաջողվել է ընդհուպ մոտենալ Կոստանդնուպոլսի պատերին և պաշարել այն: Սակայն, բոլոր դեպքերում էլ նվաճողների ծրագիրը՝ ներխուժել կայսրության սիրտը, անհաջողության է մատնվել:

Օմայանների կողմից Կոստանդնուպոլիսը նվաճելու վերջին փորձը տեղի է ունեցել 717—718 թթ., երբ խալիֆայությունը գտնվում էր իր հզորության գագաթնակետին, իսկ Բյուզանդիան, ընդհակառակը, ծայրաստիճան թուլացած էր՝ հաճախակի տեղի ունեցող հեղաշրջումներից, զահի ու իշխանության համար մղվող արյունալի պայքարից: Չնայած այդ ամենին, 717 թվականի մարտի 25-ին զահ բարձրացած Լևոն Գ Իսավրացի կայսրին (717—741) հաջողվեց հմտորեն կազմակերպել Կոստանդնուպոլսի պաշտպանությունը և պարտության մատնել թըշնամուն: Բյուզանդացիների տարած հաղթանակը արգելակեց արաբների հետագա առաջխաղացումը դեպի արևմուտք:

Կոստանդնուպոլսի 717—718 թթ. պաշարման մասին տեղեկություններ առաջին հերթին քաղում ենք բյուզանդական պատմական աղբյուրներից: Շնորհիվ Թեոփանես (752—818)¹ և Նիկեփոր (մահ, 828 թ.)² պատմիչների, այս, անկասկած մեծ նշանակություն ունեցող իրադարձության մասին հայտնի են դառնում բազմաթիվ կարևոր ու հետաքրքիր մանրամասներ: Արաբական պատմաաղբյուրներից հարկ է նշել անհայտ հեղինակի «Ակնաղբյուրների և այգիների գիրքը», որտեղ զետեղված է վերոհիշյալ պաշարման հանգամանալից պատմու-

թյունը՝ Սպասվածից ավելի սեղմ են այս հարցում մյուս արար պատմիչները։ Ալ-Բաբարին (838—923)⁴, Իրն ալ-Ասիրը (1160—1233)⁵ դժկամությամբ են խոսում խնդրո առարկա իրադարձության մասին։ Ուշադրության արժանի են նաև ասորական աղբյուրներում տեղ գտած նկարագրությունները⁶։

Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման փաստը չի վրիպել միջնադարյան հայ մատենագիրներից շատերի ուշադրությունից։ Այսպես՝ Ղևոնդը (VIII դ.), Ասողիկը (X—XI դդ.), Անանուն գրուցագիրը (կեղծ Շապուհ Ռազրատունի) (X—XI դդ.), Վարդան Արևելցին (XIII դ.), նաև Հևթումը (XIII դ.) հանգամանորեն կամ թուցիկ կերպով անդրադարձել են այս իրադեպին⁷։

Չնայած հայկական պատմաաղբյուրներում Կոստանդնուպոլսի երրորդ պաշարմանը վերաբերող նյութերի առկայությանը, հաճախ ուսումնասիրողները աչքաթող են արել դրանք և բավարարվել միայն այլապի հեղինակների հաղորդումներով։ Ֆրանսիացի արևելագետ Մարիուս Կանարը, իր «Արաբների արշավանքներն ընդդեմ Կոստանդնուպոլսի» ուշագրավ աշխատության մեջ, բերելով 717—718 թթ. պաշարումը հիշատակող պատմական սկզբնաղբյուրների մի ստվար ցանկ, տեղ չի հատկացնում այնտեղ և ոչ մի հայ հեղինակի պատմության⁸։ Պնդել, որ նա ծանոթ չի եղել վերոհիշյալ հայ պատմիչների գործերին, դժվար թե ճշմարտացի լինի։ Հիշենք, որ Ղևոնդի «Խալիֆաների պատմությունն» արդեն 1856 թ. հրատարակվել էր ֆրանսերեն լեզվով և մատչելի դարձել եվրոպացիների համար։ Հավանաբար Կոստանդնուպոլսի պաշարման մասին հայ պատմիչների թողած տեղեկությունների, առաջին հայացքից հեքիաթային թվացող բնույթն է, որ պատճառ է դարձել Կանարի և այլոց կողմից ցուցաբերած անտարբերության։ Ծիշտ է, այս պաշարմանը վերաբերող հատվածներում հայ հեղինակները թույլ են տվել մի շարք սխալներ, աղավաղումներ, գործողությունների հերթականության ու ժամանակագրության որոշակի խախտումներ ու անճշտություններ, առկա են առասպելական դրվագներ, սակայն այդ հաղորդումները բոլոր դեպքերում իրենց հիմքում պատմական են և մեր խորին համոզմամբ կարող են օգտակար լինել քննարկվող իրադարձության ամբողջական ուսումնասիրության համար։

Ք. Պատկանյանը ժամանակին զուգահեռներ է անցկացրել օտար աղբյուրների հիման վրա ստեղծված Կոստանդնուպոլսի երրորդ պա-

շարման պատմության և Ղևոնդի պատմության համապատասխան հատվածի միշև և հանգել այն եզրակացության, որ ընայած ժամանակագրական տարբերություններին, ռազմական գործողությունների վերաբերյալ մանրամասներում նրանց միշև չկան տարաձայնություններ: Նա «առավել վստահություն» է պահանջում նաև Ղևոնդի ժամանակագրության համար⁹: Այսպիսի անվերապահ մոտեցումը նույնպես կարող է վնասել խնդրին և բազմաթիվ անճշտությունների պատճառ դառնալ:

Հայ հեղինակներից հնագույնը, որն իր մատյանում զետեղել է Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման պատմությունը, հենց Ղևոնդն է: Այդ առթիվ նրա հայտնած տեղեկությունները հիմնական աղբյուր են հանդիսացել նաև մյուս հայ պատմիչների համար: Այսպես, Ասողիկը փաստորեն համառոտ կերպով վերապատմում է մեծ պատմիչին: Անանուն զրուցագրի պատմության կմախքը նորից հիշեցնում է նրան, սակայն՝ այն իր հերթին բավականին ինքնուրույն է, հավանաբար Ղևոնդի գործին աղոտ ծանոթ լինելու պատճառով: Ինչ վերաբերում է Վարդանին, ապա նրա հայտնած այս ծայրաստիճան համառոտ տեղեկությունը՝ «Եւ եկաց յետ նորա (Եղիղից—Ա. Մ.): Հէշմ, որ առաքեաց զեղբայր իւր Մսլիմ մինչեւ ցԲիւթանիա ոգիս եօթն բիւր: Եւ միւս անգամ գնաց դարձեալ և ծովասոյգ լինի ի զօրութենէ խաչին յիսուն բիւր արանց: Եւ կայսր արձակեաց զՄսլիմ պատմել զփառս Աստուծոյ»¹⁰, Ղևոնդի տարբերակի ամփոփումն է մեկ-երկու նախադասությամբ:

Բացառություն է կազմում Հեթումը, որի հայտնած թուուցիկ տեղեկություններն անկասկած քաղված են բյուզանդական պատմական աղբյուրներից: Իր ժամանակագրության մեջ նա ասում է. «ԶԸ (708 թ.), ի սորա ժամանակին Տաճիկք եկեալ ի Կոստանդնուպոլիս պաշարեցին զԳ (3) ամս»¹¹: Այն, որ Լևոն Գ թագադրվել է 708 թ. և իշխել 25 տարի, հիշեցնում է Թեոփանեսին, ըստ որի Լևոնը թագադրվել է Քրիստոսի մարդեղության 709-րդ տարում և իշխել 25 տարի¹²: Տարբերությունը միայն մեկ տարվա մեջ է: Իսկ այն կարծիքը, որ պաշարումը տեւել է երեք տարի, ըստ երևույթին քաղված է Նիկեփորից, որն այդ առթիվ գրում է. «30 ամիսների ընթացքում նրանք պահեցին այն (արաբները՝ Կոստանդնուպոլիսը—Ա. Մ.) պաշարման մեջ»¹³:

Ըստ հայ միջնադարյան մատենագիրների, բացառությամբ Հեթումի և Անանուն զրուցագրի, արաբների կողմից դեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքը և նրա պաշարումը տեղի է ունեցել Օմայյան խալիֆա Հիշամ Իբն Աբդ ալ-Մալիքի (724—743) օրոք։ Այս սխալը սկսվում է Ղեոնդից և տեղ գտնում թե՛ Ասողիկի և թե՛ Վարդանի մոտ։ Ինչպես արդեն վերը նշվել է, Ք. Պատկանյանը անվերապահորեն ընդունել է Ղեոնդի ժամանակագրությունը տվյալ հարցում՝ պահանջելով նրա համար առավել վստահություն, պատճառաբանելով, որ մինչ այդ հատվածը պատմիչի ժամանակագրության մեջ հակասություններ չեն նկատվել։ Սակայն նման փաստարկը բավարար լինել չի կարող։ Սխալն անկասկած թույլ է տրված։ Օտար աղբյուրներում եղած բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ պաշարումն սկսվել է Սուլեյման Իբն Աբդ ալ-Մալիք խալիֆայի (715—717) օրոք և ավարտվել Օմար Իբն Աբդ ալ-Ազիզի (717—720) գահ բարձրանալուց հետո, ավելի ստույգ 717—718 թթ. ընթացքում։

Դժվար է կռահել, թե որոնք են Ղեոնդի թույլ տված նմանօրինակ անճշտության իրական պատճառները։ Ն. Ալինյանն այս հատվածում Ղեոնդի ժամանակագրության ընթացքի խախտումը բացատրում է նրանով, որ մի անհայտ անձնավորություն, որը Ղեոնդի «Պատմության» մեջ ներմուծել է Հեոն կայսեր և Օմարի թղթակցությունները, միաժամանակ, դիտավորյալ Կոստանդնուպոլսի պաշարմանը նվիրված հատվածը տեղափոխել է Հիշամի ժամանակները։ Նա գրում է. «Անիկա Օմարի «առ ազգս քրիստոնէից ցոյց տուած բարեխառնութեան եւ բարեմտութեան» բոլորովին անհամաձայն նկատելով Կ. Պոլսի պաշարումը... փոքրիկ ետեւառաջութեամբ յաջողած է պատմութիւնը համաձայնեցնել իր ճաշակին»¹⁴։ Սակայն, նման բացատրությունը համոզիչ չէ, քանի որ Օմար խալիֆան եղել է ոչ թե դեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքի նախաձեռնողը, այլ այն անձնավորությունը, որը հրամայել է մահմեդականներին լքել քաղաքի մատույցները և ետ վերադառնալ։ Նրա քաղաքականությունը Բյուզանդիայի նկատմամբ հենց սկզբից հաշտվողական է եղել։ Այն, որ նրա խալիֆա հռչակվելուց հետո գեռ որոշ ժամանակ շարունակվել է պաշարումը, ամենևին չի փոխում գործի էությունը, քանի որ նա, բնականաբար, չէր կարող անմիջապես դադարեցնել այդքան հեռու գնացած արշավանքը, իսկ որոշ աղբյուրներ հաստատում են նաև, որ Մասլաման ստանալով Օմարի հրամանը ետ դառնալու մասին, երկար ժամանակ

թաքցրել է այն իր ենթականերից՝ չցանկանալով ձեռնունայն վերադառնալ արշավանքից¹⁵։ Այնպես որ, բոլորովին հարկ չի եղել տեղափոխել պաշարման հատվածը Օմարի ժամանակներից դեպի Հիշամի¹⁶ը սուսկ այն պատճառով, որ այդ փաստը կարող էր հակասել նրա «բարեպաշտ» կերպարին։ Ընդհակառակը, այն, որ նա է դադարեցրել բյուզանդական մայրաքաղաքի պաշարումը, կարող էր նպաստել նրա «բարեպաշտության» առավել հաստատմանը։

Հայ միջնադարյան պատմիչներից միայն Անանուն զրուցադիրն է, որ Կոստանդնուպոլսի պաշարումը վերադրում է Օմարի (Ամբ խալիֆայության տարիներին¹⁶։ Սակայն այս Օմարը պատմիչի համար ոչ թե որոշակի մի անձնավորություն է, այլ խալիֆաների մի հավաքական կերպար։ Խոսել այս պատմիչի ժամանակագրական հայացքների մասին դժվար է, քանի որ նա չի հիշատակում ստույգ տարեթիվներ, իսկ դեպքերի հերթականությունը հաճախ խախտված է։

Անդրադառնալով Ղևոնդին, պետք է ենթադրել, որ նա ստույգ չիմանալով, թե երբ է տեղի ունեցել Կոստանդնուպոլսի սուլյն պաշարումը, այն շփոթել է Հիշամի օրոք տեղի ունեցած բաղամթիվ արաբաբյուզանդական ընդհարումներից որևէ մեկի հետ։ Նա արշավանքի սկիզբը համարում է արաբա-խազարակսն հայտնի պատերազմին (730—731) հաջորդած տարին, այսինքն մոտավորապես 731—732 թթ., որը և նշում է Ք. Պատկանյանը¹⁷։ Այդ տարիներին, իրոք տեղի է ունեցել մի կողոպտչական արշավանք դեպի Բյուզանդիայի փոքրասիական տիրույթները, որն ի դեպ, առաջնորդել է նույն Մասլաման՝ Հիշամի եղբայրը, սակայն այն լուրջ բնույթ չի ստացել և ավարտվել է Կապադովկիայում գտնվող Խաբսիանոն բժրդի գրավումով¹⁸։

Քննարկվող արշավանքին նվիրված հատվածը Ղևոնդը, ինչպես նաև Ասողիկը սկսում են նրանով, որ իսմայելի իշխանն սպառնում է հոռոմների թագավորին՝ պահանջելով նրանից հարկատու դառնալ իրեն. «Ճե յես ալսորիկ (խազարների դեմ մղած պատերազմից հետո—Ա. Մ.) սկսաւ գոռալ ընդդէմ թագաւորին Յունաց և յղէր դեսպան առ Լեոն կայսր հոռոմոց՝ զալ նմա ի հնազանդութիւն հարկատրութեան»¹⁹։

Իրոք, մինչև պատերազմի սկսվելը Բյուզանդիայի և խալիֆայության միջև փոխանակվել են դեսպանություններ։ Սակայն, օտար աղբյուրները հիշատակում են միայն բյուզանդականի մասին։ Ինչպես վկայում են թեոփանես և Նիկեիոր պատմիչները, Անաստասիոս Բ

կայսրը (713—715) տեղեկանալով, որ մահմեդականները Բյուզանդիայի դեմ ցամաքով ու ծովով արշավելու նախապատրաստություն են տեսնում, դեսպանություն է ուղարկում Վալիդ խալիֆայի (705—715) մոտ՝ խաղաղության շուրջ բանակցելու նպատակով²⁰։ Ամենևին չի բացառվում, որ տեղ գտած լինեն և հակառակ կողմից դեսպանություններ, որը և բխում է հայ պատմիչի վերոբերյալ հաղորդումից։ Պատմիչը ընդհանրապես չի բացահայտում այս բանակցությունների ունեցած ընթացքը։ Այնուամենայնիվ դեպքերի զարգացման հետագա ընթացքը ցույց է տալիս, որ դրանք անարդյունք են ավարտվել, միգուցե հենց այն պատճառով, որ բյուզանդացիները հրաժարվել են հարկատու դառնալ խալիֆայությանը, ինչը և վկայում է Ղևոնդը։

Այնուհետև Ղևոնդն ու Ասողիկը խոսում են Մասլամայի առաջնորդած մի նախնական արշավանքի մասին, որը հասել է մինչև Բիթանիա՝ Սանգարիոս-Սանգառիս գետի ափերը։ Այստեղ, ընդհարվելով բյուզանդացիների բանակի հետ, արաբները խոշոր հաղթանակ են տանում, որից հետո ասպատակում են երկիրը՝ գրավելով նրա գավառներն ու քաղաքները։ Այնուհետև, մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով (80000) իրենց երկիրն են վերադառնում²¹։

Ք. Պատկանյանը, փաստորեն, նույնացնում է Ղևոնդի նկարագրած այս արշավանքը Կոստանդնուպոլսի դեմ արաբների արշավանքի սկզբում՝ Ամորիում քաղաքի մոտ տեղի ունեցած դեպքերի հետ²²։ Այն, որ Ղևոնդի մոտ առկա են դրվագներ, որոնք հիշեցնում են Կոստանդնուպոլսի դեմ արաբների կատարած արշավանքի ընդունված պատմության սկիզբը, ճշմարիտ է։ Այսպես, նա նշում է Ղևոնդի ցուցաբերած զգուշությունը, նրա ջանքերն ընդհարումից խուսափելու համար, Մսլիմի (Մասլամա) զորքի երեք մասի բաժանվելու փաստը, «բանակի աղխը» ճամբարից հեռացնելը և այլն։ Այս ամենն իր արտահայտությունների նաև օտար աղբյուրներում։ Չնայած դրան, մեր և այլազգի պատմիչների միջև կան նաև նկատելի տարածայնություններ այս հարցում։ Նախ, եթե հայ պատմիչները հաղորդում են, որ արաբները բանակ են դրել Բիթանիայում, Սանգարիոս գետի ափին՝ հույներին դեմ-դիմաց, ապա. օտար հեղինակներն արաբների բանակատեղին համարում են Ամորիում քաղաքի մոտակայքը, որը գտնվում էր Գալաթիայում։ Երկրորդ, եթե հայ պատմիչները խոսում են արաբների գործադրած խորամանկության մասին, որի միջոցով նրանց հաջողվում է բյուզանդացիներին մարտի մեջ քաշել և պարտության մատնել նրանց, ապա

օտար աղբյուրները պատմում են Ղևոնի խորամանկության մասին, որի արդյունքը այն է լինում, որ բյուզանդացիներին հաջողվում է խուսափել ընդհարումից և քաշվել դեպի մայրաքաղաք։ Նթե հայկական աղբյուրները վկայում են, որ արաբները հաղթանակ տանելուց հետո գերիներով ու բազում խնդությամբ իրենց երկիրը վերադարձան, ապա օտար հեղինակները շեն խոսում և ոչ մի նման վերադարձի մասին։ Ըստ նրանց, Մասլաման Ամորիումից շարժվում է դեպի Պերգամոն, նվաճում այն և ձմեռում Ասիա նահանգում²³։ Նմանությունների ու հակասությունների առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ հայ պատմիչներն իրար են միաձուլել երկու տարբեր արշավանքների մասին եղած հաղորդումները։ Իրականում, մինչև Կոստանդնուպոլսի պաշարումը, արաբները բազմիցս ասպատակել են Բյուզանդիան։ Օտար պատմաաղբյուրներում կան բազմաթիվ հիշատակումներ այդպիսի, արաբների համար հաջող ավարտ ունեցած արշավանքների մասին, որոնցից մի քանիսը առաջնորդել է Մասլաման։ Թեոփանեսը հիշատակում է մի այսպիսի արշավանք, որը տեղի է ունեցել Կոստանդնուպոլսի պաշարումից երկու տարի առաջ։ «Այդ տարի Մասլաման Ռոմանիայում ասպատակ սփռեց, ավարառեց Գալատիան և բազում գերիներով ու թալանով վերադարձավ»²⁴։ Այս կարճ նախադասությունն իր բովանդակությամբ հիշեցնում է հայ հեղինակի վերոհիշյալ պատմությունը, և մենք հակված ենք կարծելու, որ Ղևոնդի խոսքը վերաբերում է հենց այս արշավանքին, որի նկարագրությունը նա շաղախել է դեպի Կոստանդնուպոլսի ուղղված արշավանքի սկզբնական շրջանի մասին ունեցած որոշ տեղեկություններով։ Կասկած կարող է հարուցել այն հանգամանքը, որ Ղևոնդը հիշատակում է Բիթանիան, իսկ Թեոփանեսը՝ Գալատիան։ Սակայն չի բացառվում, որ այդ երկու երկրամասերն եղել են արաբական ասպատակող զորքի երթուղում, նկատի ունենալով, որ սրանք հարևան նահանգներ են և Սանգարիոս գետը երկուսի տարածքով էլ հոսում է։

Այսպիսով, ըստ հայ հեղինակների, արաբները, ոգևորված ձեռք բերած հաջողությունից, ձեռնամուխ են լինում մի նոր արշավանքի, որը և շուտով վերածվում է Բյուզանդիայի մայրաքաղաքի պաշարմանը։ Մասլաման, որը նորից արաբական բանակի գլուխ էր կանգնած, ներգում է տալիս եղբորը՝ Հիշամ խալիֆային, «ոչ դառնալ առ նա մինչև կատարեսցէ զկամս անձին իւրոյ, զի ուխտ եղեալ էր զայս, բառնալ զթագաւորութիւնն և կործանել զքաղաքն ի հիմանց, որ կոչի Կոս-

տանդնուպոլիս, և զղանազան հիմնարկութիւնս սրբոյն Սոփիայ, որ ի վերնոյն իմաստութենէ շինեղաւ յերկրի տուն Աստուծոյ՝ պղծալից դիցապաշտութեանն շինել տեղի երկրպագութեան²⁵։ Օտարազգի հեղինակներից այսպիսի երդման մասին հիշատակում է միայն Միքայել Աստրին, ըստ որի Մասլաման արշավանքից առաջ երդում էր տվել Սուլեյման խալիֆային չվերադառնալ, մինչև որ չնվաճի Կոստանդնուպոլիսը²⁶, իսկ ալ-Թարարին վկայում է, որ Սուլեյմանը հրամայել էր Մասլամային ետ չվերադառնալ մինչև որ չնվաճի քաղաքը կամ էլ ինքր նրան ետ չկանչի²⁷։ Ինչպես նկատել է Մ. Կանարը, սա է եղել պատճառն այն բանի, որ երբ Մասլաման Կոստանդնուպոլիս պատերի տակ ծանր դրութեան մեջ է ընկել չի համարձակվել ինքնակամ լքել դիրքերը²⁸։

Հայ հեղինակները չեն տարվում Մասլամայի անցած ճանապարհի նկարագրութեամբ, և նա անմիջապես հայտնվում է Պոնտոսի ափին, որտեղ և բանակ է դնում։ Անանուն ղրուցագիրը որպես արաբների բռնակատեղի նշում է Խրիստապոլիս քաղաքը, որը գտնվել է Բոսֆորի ափին՝ Կոստանդնուպոլսին դեմ դիմաց։ Այս հարցում հայկական աղբյուրները հակասութեան մեջ են օտար աղբյուրների հետ։ Վերջիններս հաղորդումներից պարզվում է, որ արաբական բանակի մի մասը անցել է Արյուդոսը և Թրակիայի կողմից մոտեցել քաղաքին, իսկ ծովով օգնութեան է հասել նավատորմը²⁹։ Միքայել Աստրին հիշում է նաև, որ մայրաքաղաքը հացով մատակարարելը դժվարացնելու նպատակով, արաբները գրավել են նաև Քաղկեդոնը³⁰։

Այնուհետև հայ մատենագիրները վկայում են սպառնալիքներով ողողված մի հրովարտակի մասին, որ Մասլաման ուղղել է Լևոն կայսրին, իսկ վերջինս իր պատասխանում, վկայակոչելով աստծուն, խորհուրդ է տալիս նվաճողին սթափվել և հեռանալ քաղաքի մատուցներից, աստծո ցասումից խուսափելու համար³¹։ Այլազգի մատենագիրներից շատերն իրենց պատմություններում հաստատում են Լևոնի և Մասլամայի միջև եղած փոխադարձ կապի իրական լինելը³²։ Լևոնը բանեցնելով նուրբ դիվանագիտութիւն, գաղտնի կապ է ստեղծում իր և Մարլամայի միջև՝ ցանկանալով օգտագործել վերջինիս հովանավորութիւնը՝ կայսերական թագը զավթելու համար։ Իր հերթին Մասլաման համաձայնվում է օգնել Լևոնին այն պայմանով, որ վերջինս թագադրվելուց հետո իրեն հանձնի մայրաքաղաքը։ Ի վերջո Լևոնը հասնում է իր նպատակին և կայսր հռչակվում՝ լիովին մոռացութեան

մատնելով տված խոստումները: Ահա այսպիսի պարագաներում միանգամայն հնարավոր է, որ խարված ու գազազած Մասլաման սպառնալիքներ հղեր իր նախկին դաշնակցին, արդի ախոյանին: Այս հրովարտակի, ինչպես նաև Լեոնի պատասխանի տեքստերը պահպանվել են միայն հայկական աղբյուրներում, մասնավորապես Ղևոնդի մոտ: Դրվար է պնդել դրանց վավերական լինելը, սակայն բոլոր դեպքերում հակված ենք այն տեսակետին, որ Ղևոնդը ծանոթ է եղել Լեոն Գ-ին ուղղված և նրա ձեռքով գրված տարբեր նամակների, որոնցից ամենանշանավորը կայսեր և Օմար խալիֆայի միջև եղած թղթակցությունն է, որի վավերական լինելը ընդունում են Ա. Զեֆրին, Ն. Ակինյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը³³:

Քանի որ բանակցություններն անարգյունք են ավարտվում, Մասլաման սկսում է հարձակումը քաղաքի վրա՝ ծովով: Լեոն կայսրը, տեսնելով թշնամու բանակի բազմությունը, ամրանում է քաղաքի պարիսպներից ներս. «Իբրև հտես կայսրն Լեոն զբազմութիւն զօրացն անառաքեալ ի վերայ ծովուն՝ տայր հրաման կազմել զվանդակակապ կազմած երկաթեղէն պարսպին, և աղխեալ զդուռն շղթայագործ ամրոցին...»³⁴: Քաղաքը պաշտպանության նախապատրաստելու վերաբերյալ Թեոփանեսը գրում է. «Վերջինիս (Կոստանդնուպոլսի,—Ա. Մ.) բնակիչները ամրացրել էին ցամաքային պարիսպը՝ մի մեծ խրամատ փորել, որի հտեում առանց շաղախի մի ցածր շրջապարիսպ կառուցել»³⁵:

Ղևոնդը, որին հետևել են նաև մյուս հայ պատմիչները, խուսափում է պատերազմական գործողությունների մանրամասներից՝ բյուզանդացիների հաղթանակի պատճառը տեսնելով միայն աստծո զորության մեջ: Այսպիսի մոտեցումը բնորոշ է Ղևոնդի ողջ «Պատմությունը», ինչը և նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը³⁶: Այն առասպելը, որ պատմում է Ղևոնդը՝ կապված աստծո կողմից արաբական նավատորմի կործանման հետ, զարմանալիորեն հիշեցնում է Սեբեոսի հիշատակած մի առասպել՝ արաբների կողմից Կոստանդնուպոլսի հավանաբար առաջին պաշարման մասին³⁷: Ինչպես Ղևոնդի տարբերակում, այնպես էլ այստեղ, բարեպաշտ կայսեր և քաղաքի բնակչության երկարատև աղոթքները պատճառ են դառնում այն բանին, որ աստված ցույց է տալիս իր զորությունը և կործանում թշնամու նավատորմը:

Սեբեոսի և Ղևոնդի մեջբերած կիսաառասպելական պատմությունների բովանդակության նմանության պատճառն ըստ երևույթին հետև-

յալն է. Կոստանդնուպոլսի առաջին պաշարումից հետո ստեղծվել է այն առասպելը, որը և գրանցել է Սերեոսը: Մոտ մեկ դար անց, Ղևոնդը, կարծելով, որ տեղի է ունեցել բյուզանդական մալրաքաղաքի ընդամենը մեկ պաշարում, հարմարեցրել է Սերեոսի հաղորդումը 216—718 թթ. արշավանքին, միաժամանակ ղգալիորեն ձևափոխելով այն: Այսօրինակ անճշտության մեջ դեր են խաղացել Աերեոսի տարբերակի և երրորդ պաշարման ընթացքում իրոք տեղի ունեցած որոշ դեպքերի, երևույթների արտաքին նմանությունը: Ինչպես նախատորմերի ակտիվ մասնակցությունը, փոթորիկները, վերշապես երկու դեպքում էլ արարների միօրինակ պարտությունը:

Երրորդ պաշարման ընթացքում մահամեղականների նավատորմի գլխավորն կործանման փաստը հաստատում են նաև օտար աղբյուրները³⁸:

Արաբական նավատորմի կործանումից հետո դեպքերն ըստ Ղևոնդի ստանում են զարգացման հետևյալ ընթացքը. «Եւ զմասն ինչ մնացեալ ղօրուն ի տախտակսն՝ տարեալ հանէր յայնկոյս ծովուն յաշխարհն Թրակացւոց, և զոմանս ի կղզիս հեռաւորս վարեալ ընկենոյլ: քանզի էին բազմութիւն ղորացն աւելի քան զԾ բիւր արանց: Իսկ որի վտանգաւոր նեղութենէն զերթան ի ցամաք՝ ոչ եղև ձեռնամուխ: մատնել ի սուր անողորմ, այլ ետ հրաման պահել զնոսա պաշարմամբ, զի ոչ ուրէք գոյր հնար ելանել նոցա ի խնդիր կերակրոց: Եւ սով մեծ լինէր ի բանակին նոցա մինչև սպառել զծիս և ղջորիս: Ապա յետ այնորիկ ձեռնամուխ լինէին ի հարձս և ի ծառայս փոշոտել և ուտել զի լցցեն զսովառութիւնն իւրեանց»³⁹: Մահամեղականների բանակի մնացորդների այս ողբալի արկածների մասին հաղորդում են նաև բյուզանդական, ասորական և արաբական սկզբնաղբյուրները: Այդ առթիվ: Թեոփանեսը գրում է. «... երբ արաբների մեջ սաստիկ սով եղավ, նրանք ստիպված սկսեցին իրենց սատակած անասուններն ուտել՝ ձիերին, ավանակներին ու ուղտերին: Պատմում են, որ նրանք ուտում էին անգամ մեծած դիակները, իրենց՝ աղբը՝ շաղկով և փռում եփելով: Նրանց մեջ բռնկվեց նաև համաճարակ, որն՝ անթիվ զոհեր տարավ»⁴⁰:

Ըստ «Ակնաղբյուրների գրքի» անհայտ հեղինակի, Ղևոնդ կայսրը դիմելով խորամանկության, զրկում է մահամեղականներին մթերքների պաշարից, որի հետևանքով սարսափելի սով է սկսվում նրանց ճամփարում⁴¹:

Համաձայն օտար աղբյուրների, Կոստանդնուպոլսի երրորդ պաշարումն ավարտվում է նրանով, որ Օմար խալիֆան համոզվելով Բյուզանդիայի մայրաքաղաքը գրավելու անհնարինության մեջ, ետ է կանչում Մասլամային, որը և որոշ ժամանակ անց վերադառնում է Ասորիք⁴²։ Հայ հեղինակների մոտ այս վերջաբանը այլ կերպ է ներկայացվում։ Ըստ նրանց, ընկնելով պաշարման մեջ, Մասլաման գլուխընկնում է աղբյուրում Լեոնից։ Վերջինս իր մոտ է կանչում Մասլամային, նախատում նրան, ապացուցում Տիրոշ գործությունը, ապա ներում շնորհում և թույլատրում վերադառնալ իր երկիրը։ Մահմեդականները զգուշորեն անցնում են Միջերկրական ծովը և գալիս Ասորիք։ Այստեղ հայրենակիցների՝ կշտամբանքներին ու նախատինքներին Մասլաման պատասխանում է. «Ոչ կարծի ընդ Աստուծոյ կոռել»⁴³։ Այս արշավանքից հետո նա այլևս երբեք սուր չի վերցնում ձեռքը⁴⁴։

Դիոնիսիոս՝ Թելմահրացին, ինչպես նաև Կարամանին հաղորդում են, որ Մասլաման ետ վերադառնալու մասին Օմարի հրամանը ստանալուն՝ պես, խնդրում է Լեոնին թույլ տալ իրեն մուտք գործել քաղաք՝ նրան այցելելու նպատակով։ Շնա երեսուն ձիավորներով քաղաք մտավ, երեք օր շրջեց և հիացավ թագավորական գործերի վրա»⁴⁵։

Համագրելով հայ և վերոհիշյալ հեղինակներին տարբերակներն այս առթիվ, կարելի է ենթադրել, որ Մասլամայի և նրա զինակիցների հայտնվելը Կոստանդնուպոլսում պայմանավորված է ուղղակի նրանց գերի հանձնվելով։ Այն, որ եղել են արաբներին գերելու դեպքեր հաստատվում են Թեոփանեսը, ըստ որի, վերադարձի ճանապարհին մահմեդականների նավերից միայն տասը փրկվեցին, որոնցից հինգն ընկան բյուզանդացիների ձեռքը և Միքայել Ասորին, որը նույնպես հաստատում է բյուզանդացիների և բուլղարների դեմ վարած մարտերում արաբներից շատերի գերի ընկնելու փաստը⁴⁶։ Այն, որ Լեոնն ազատություն է շնորհել Մասլամային և նրա զինակիցներին, պետք է բացատրել նրա ցանկությանը՝ հաշտության գալ խալիֆայության հետ՝ կայսրության ներքին գործերը կարգավորելու և իր գահի հիմքերը ամրապնդելու համար ժամանակ շահելու նպատակով։

Այսպիսով, հայկական աղբյուրների Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման մասին հաղորդումները՝ բացի առասպելականից ու հեքիաթայինից, իրենց մեջ պարունակում են պատմական արժեք ներկայացնող դրվագներ։

ОСАДА КОНСТАНТИНОПОЛЯ АРАБАМИ В 717—718 гг. ПО АРМЯНСКИМ ИСТОЧНИКАМ

Очередная арабская военная кампания в Малой Азии обернулась осадой Константинополя в 717—718 гг., но благодаря умелой оборонительной тактике византийцев и некоторым объективным причинам, завоевателям не удалось взять город. Кроме византийских, арабских и сирийских исторических источников, об этой осаде Константинополя сообщают и некоторые средневековые армянские авторы, в частности, Гевонд, Асолик, Вардан и т. д. По той причине, что эти сообщения, на первый взгляд, носят характер преданий, они не были удостоены внимания исследователей. Однако, их подробное изучение выявляет, что они в основе своей историчны и во многом могут способствовать всестороннему освящению вопроса.

- 1 *Բևութիանն Խոստովանող, ժամանակագրություն, Թարգմ. և ծանոթ. Հր. Բարթրեմիուսի, Երևան, 1883, էջ 98—101 և 105—108:*
- 2 Никифора (патриарха конст.) Краткая история (перевод Е. Э. Липшица), «Византийский временник». 111, 1950, с. 363.
- 3 *Սրա անգլերեն Թարգմ. տե՛ս* Brooks E. W., The Campaign of 716—718 from Arabic Sources, „The Journal of Hellenic Studies“, vol. X, London, 1899, P 20—29:
- 4 *Tarikh al-Tabari*, vol. VI, Cairo 1971, էջ 523, 530—513, 533,
- 5 *Իրն ալ-Ասիր, Թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1881, էջ 70—72:*
- 6 *Տե՛ս* Chronique de Michel le Syrien, vol. 2, Paris, 1963, էջ 483—480; Chronique de Denys de Tell—Aahre, Paris, 1895, p. 12—14:
- 7 *Տե՛ս Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի Հայրոց, ՍՊԲ, 1887, էջ 103—112, Պոտեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 128—130, Պատմութիւն Անանու զրուցադրի Կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Թարգմ. առաջարան ու ծանոթ. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971, էջ 78—87, Մեծի վարդապետի Բարձրորդեցւոյ Պատմութիւն Տիեզերական ի լոյս ընծայեաց Մ. Էմին. Մ. 1861, էջ 102, Հեթում, Պատմութիւն, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» հ. 2, էջ 33:*
- 8 Canard M., Les Expéditions des Arabes contre Constantinople „Journal Asiatique“, t. CCVIII, № 1, Paris, 1926, p. 80.
- 9 Гевонд Вардапет, История халифов, пер. К. Патканяна, СПб, 1862, прим. № 164, с. 153.
- 10 *Վաղան, նշված աշխ., էջ 102:*
- 11 *Հեթում, նշված աշխ., էջ 48:*

- 12 Թեոփանես, նշված աշխ., էջ 101—102:
- 13 *Ηκυκφορ*, նշված աշխ., էջ 372: Նիկեփորն այստեղ ընկած է հակասությունների մեջ. պաշարման տևողությունը համարելով 30 ամիս, նա ամրոցը իրադարձությունը ամփոփում է 717—718 թթ. սահմաններում:
- 14 Ն. Ակիլյան. *Ղևոնդ երեց պատմագիր, Մատենադարան հետազոտություններ*, ՃԻՏ, Հ. Գ, Վիեննա, 1930, էջ 93:
- 15 M. Canard, նշված աշխ., էջ 89:
- 16 Պատմութիւն Անանուն ղրուցագրի, էջ 77:
- 17 ΓεωκΟΘ, նշված աշխ., ծանոթ. 169, էջ 155:
- 18 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 119: Ըստ Իրն ալ-Ասիբի հարսիանոն (հարշանա) ամրոցը նվաճել է Մուավիա իրն Հիշամը և ոչ թե Մասլաման: Տե՛ս Իբն-ալ-Ասիբ, նշվ. աշխ., էջ 82:
- 19 Պատմութիւն Ղևոնդեայ, էջ 103, հմտ. Ստեփանոս Տարօնեցի, նշվ. աշխ., էջ 128:
- 20 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 96, *Ηκυκφορ*, նշվ. աշխ., էջ 370:
- 21 Պատմութիւն Ղևոնդեայ..., էջ 104, Ստեփանոս Տարօնեցի, նշվ. աշխ., էջ 128:
- 22 ΓεωκΟΘ, նշվ. աշխ., ծանոթ. 164, էջ 153:
- 23 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 101, M. Canard, նշվ. աշխ., էջ 82:
- 24 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 96:
- 25 Պատմութիւն Ղևոնդեայ..., էջ 105, տե՛ս նաև Ստեփանոս Տարօնեցի, էջ 128, Անանուն գրուցագիր, էջ 77: Այս վերջինիս տարբերակում Մահմատ զորավարը երդվում է «արքա Ամոին» հռոմոց թագավորին շնորհակալ նրա առաջը բերել:
- 26 Michel le Syrien, նշվ. աշխ., Հ. 2, էջ 483:
- 27 Tarikh al-Tabari, Հ. 6, էջ 530:
- 28 M. Canard, նշվ. աշխ., էջ 87:
- 29 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 105, Brooks, նշվ. աշխ., էջ 23:
- 30 Michel le Syrien, նշվ. աշխ., Հ. 2, էջ 484:
- 31 Մանրամասները տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ..., էջ 105—109:
- 32 M. Canard, նշվ. աշխ., էջ 87, Brooks, նշվ. աշխ., էջ 23:
- 33 Տե՛ս Ղևոնդ. Պատմություն, թարգմ. ներած. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Հայ մատենագիրներ, Երևան, 1982, էջ 150—151:
- 34 Պատմութիւն Ղևոնդեայ..., էջ 109:
- 35 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 105:
- 36 Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 15:
- 37 Պատմութիւն Սերէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 170—171:
- 38 Թեոփանես, նշվ. աշխ., էջ 108, նաև *Ηκυκφορ*, նշվ. աշխ., էջ 372, Michel le Syrien, նշվ. աշխ., Հ. 2, էջ 486: Արաբական ավանդույթը չի պահպանել որևէ հիշատակություններ այս առթիվ:
- 39 Պատմութիւն Ղևոնդեայ..., էջ 110: Անանուն գրուցագիր, էջ 85: Ըստ այս վեր-

յիւնի Մասլամա և Ահմատ զորավարները 50 հոգով ափ են դուրս գալիս մի ան-
մարդարնակ կղզի, որ կոչւում է «Խորտասան»:

40 Թեփանես, նշվ. աշխ., էջ 107:

41 Brooks, նշվ. աշխ., էջ 28:

42 Canard, նշվ. աշխ., էջ 89:

43 Պատմութիւն 'Լեւոնդեայ..., էջ 112:

44 Սա թյուրիմացութիւն է, քանի որ հետագայում Մասլաման բազմիցս հանդես է
գալիս որպէս ահեղ նվաճող, տարրեր վայրէրում:

45 Denys de Tell-Mahre, նշվ. աշխ., էջ 13, Canard, նշվ. աշխ., էջ 100:

46 Թեփանես, նշվ. աշխ., էջ 108, Michel le Syrien, նշվ. աշխ., հ. 2, էջ 485: